

Անհամբեր կնպասեմք կարևոր տեղեկութեանց, և երբ ստանամք՝ ուշադրութեան արժանի եղածները կհաղորդեմք Արարատայ ընթերցողաց։ — Աւելի հետաքրքիր ենք այն պատճառով, որ անցեալ շուրջ տները ամսոյ վերջերում Պէնկալայէ երկրում ահագին փոթորիկ և թարթառ պատահեցաւ, և բաց ի մեծ աւերմունքէ՝ ըստ ոմանց 215 հազար, և ըստ այլոց 950000 մարդիկ զոհ եղած են։ —

Պեր. Պրիգորիս Արքեպիսկոպոս յառաջակայ Յունկար ամսոյ վերջերում պիտի վերադառնայ ի Վալկաթայ։

ԴԱԼԻԱՃԱՆՈՒԹԻՒՆՔ.

Բաւական ժամանակէ հետէ՝ մի քանի անձինք Ասպահանում եւ մի ծերունի եկեղեցական Վալկաթայում նըստած՝ գողցես ուրիշ դրամունք չունենալով՝ բնական սովորութիւն են ունեցել այս եւ այն Առաջնորդի՝ այս եւ այն պաշտօնակատարի դէմ դաւաճանութիւններ նիւթել, Հայոս որդի, Բաբեյանի Հայ, Պաբէկեց եւ ըն ստորագրութիւններով՝ եւ մերթ աստղանիշ դնելով՝ զանազան տեսակ եւ գրգռիչ հրատարակութիւններ կշռայլեն Արշալոյս, Մասիս եւ այլ լրագրաց մէջ, երբեմն առանձին տետրակներ կհրատարակեն, Հնդկառուտանի եւ Պարսկաստանի՝ եւ աւելի Ասպահանայ կողմանց Հայոց դրութեան վերայ տխուր տեղեկութիւններ կտան, Առաջնորդաց՝ դպրոցաց՝ քահանայից՝ եկեղեցականաց՝ հոգաբարձութեանց եւ ժողովրդեան դէմ խիստ

շատ եւ չափազանց (եթէ չասեմք ըստ մեծի մասին առիւթէ) դանդաղաներ, ողբեր, բաղմազգի տրտունջներ, հառաջանք եւ հայեր կշեղջակուտեն, այնքան որ՝ եթէ հրատարակեալներուն մէջ ուշադրութեան արժանի պարբերութիւնք եւ խնդիրք լինին՝ նոքա եւս ուշադրութենէ կտրիպին եւ այնուհետեւ երեւցածը միայն եւ միմիայն կըրն եւ հակառակութիւն կլինին։

Թէպէտ առ այժմ Ասպահանի կողմը դադարած կերեւին ակնարկեալներս, սակայն Վալկաթայի Զ. Բաբեյան չնայելով որ 3-4 Առաջնորդ-թեմակալաց դէմ մաքառելով՝ եւ ստահակ . . . վարքով եւ բարքովն արժանաւոր պատիժներ կրելով՝ ցարդ ուշաբերած չէ, եւ այսօր մի ոտքը գերեզմանի վերայ դրած՝ փոխանակ ստընդելոյ՝ եւ ապաշխարելոյ՝ լեզուաքար եւ քսու ընթացլւք եւ հրատարակութեամբ կշարունակէ աջ եւ ձախ եւ անիրաւարար յարձակուիլ, ուստի եւ ցարդ ժողովրդեան զայրոյթը եւ զզուանքը ընդ դէմ իւր շարժած էր, բայց դարձեալ չզգաստանար։

Եւ որպէս զի աւելի պարզ հասկացրեմք, եւ նորա գրուածոց եւ շարժմանց առ ժողովուրդն ներգործած եւ տպաւորած ազգեցութեան վերայ մի գաղափար տամք, ահաւասիկ յանցելումս՝ ինքըն ի Վալկաթայ նստելով « Զուլայեցի » ստորագրութեամբ մի բան գրած էր, որոյ դէմ մի ողջամիտ անձէն առ . . . բարեկամն իւր ուղղեալ հետագայ նամակը կհրատարակեմք առանց մանրամասնելոյ այս առթիւ անցած մի քանի ուշադրութեան արժանի անցքերը։

«**Զիամեղով** ի քննադատութիւն առնուլ զմի մի նիւթոց կամ առարկութեանց նորին, արարից զկարծ իմն նշմարանս: «**Զուղայեցի ոմն**» ի սկսուած և յընթացս զրուածոց իւրոց ամենայն ջանք թափեալ է տալ այնմ կարի բարոյական երեւոյթ և բարեմիտ դիտումն, զիսաւոր առարկայ կաշեալ իւր զերկար բացակայութիւն **Ս. Առաջնորդին** ի **Զուղայէ**, և համակրութիւն և կարեկցութիւն մեծ ցուցանելով վասն անխնամ և անպաշտպան մնալոյն ժողովրդեան **Զուղայու**, երեւի լուեալ զորով ևս՝ զի ցուցեալ են այնպիսի համակրութիւն տեղեոյս ժողովուրդ մեր. այլ ի վերջաւորութեան իւրում անանուն հեղինակն ոչ ևս կարողանայ դադել իւր իսկ դիտումն կամ զոգի զրութեան իւրոյ՝ որ է զլեռովին թշնամական և բամբասական ընդ դէմ **Ս. Առաջնորդին**, որոյ կրօնավայել և բարեբարոյ վարուց բազումք են վկայեալ ի բարեմիտ և համեստ և յարժանահաւատ անձանց, ուստի բաւական է այժմ ունայնացուցանել զեպերական կարծիս անանուն զրչին:

«**Առարկութիւնք** զրուածոյն մեծի մասին սխալ են ըստ կարծեաց իմոց և անարդար, զորմէ կարձն ասացից: **Առարկէ՝** զի **Լեւոնի** և **Աթոռի** անպիտան են եղեալ մեզ՝ այս ինքն **Զուղայեցւոց**՝ ընդ որ կամի և նշանակել համօրէն **Ազգին**: **Օրինչ** կարէ լինել առաւել սխալ և անուղիղ քան զայս. մոռանայ նախ՝ զի եթէ **Առաջնորդն** **Զուղայու** ունի որքան պատիւ՝ ակնածութիւն և ազդեցութիւն առաջի **Պարսից** իշխանութեանց կամ յազգային յարաբերութիւնս իւր ընդ նո-

սա, այն **Աթոռի** կոսին են շնորհ . . . **Աւագարոն** «**Զուղայեցի ոմն**» անօգուտ և անպիտան համարէ զհաղորդակցութիւն **Զուղայեցւոց** ընդ ընդհանուր Հայրապետին Հայոց, և զՆուիրակն նորա՝ ոչ արժանի ուշադրութեան: **Արեւի** անշուշտ լինել ի դասուէ անխոհեմ և անմտածող անձանց, և զբախօսաց՝ որ սովոր են խօսել և դատել զայս ոք և զայն ոք առանց կշռելոյ կամ երկար մտածելոյ զիմաստ և զուղղութիւն խօսից իւրեանց. — այսպիսի է ոք և այն որ երբեմն առաքէ հրատարակել **Երշաղոյս Արարատին** զերզիծական և վատահամբաւիչ զրուածս և ձեռնագրէ «**Հայու տըղայ**» կամ «**Հայու որդի**»:

«**Արկրորդ՝** մոռանայ «**Զուղայեցի ոմն**» զի կորուսեալ զորով Հայոց զբաղաբական և զայլ ամենայն վիճակ իւր ազգայնութեան, ամբողջութիւն ազգին տեէ տակաւին ամենայն ուրեք ի ձեռն կրօնի կամ եկեղեցւոյ իւրոյ և լեզուի: **Զիամելով** ձիգ խօսել այս մասին (զի մարթ է ձիգ խօսել) բաւական լիցի միայն ասել, զի զկրօն կամ զեկեղեցին Հայաստանեայց երեւցուցանեն և յապահովեն **Աթոռի** կոս և **Միաբանութիւն** իւր որ **Եւջմիածին**. — բարձ զնոսա — կամ բարձի թողի արա՝ զնոսա մերժելով ի նոցանէ զամենայն նպաստ և զօգնականութիւն քո ազգային՝ որպէս երեւի խրատել զքեզ «**Զուղայեցի ոմն**», և ոչ անցանկեցին բազում ժամանակք զի բարձցի անուն ազգային առաջի օտար ազգաց և աշխարհի, — ուստի ամենեցուն որ կոչեն զանձինս ազգասէր, և ոչ մերժեն ի մտաց և ի սրբտէ զհայրենիս, որովհետեւ հայրենիքն

այն խեղճ է և տարաբախտ, — զի՞ առնել այնպէս, նմանիցի արհամարհելոյ ըզնոցս, — հարկ ի վերայ կայ բարոյական և բնական, ըստ կարի նպատակ և օգնել Աթուղիկոսին և ազգօգուտ նպատակաց նորա մանաւանդ այժմ՝ յոր Նա և Միաբանութիւն նորա արժանի են օգնականութեան ազգին ամենայն ուրեք. քանզի ամենայն ուրեք մտադիր են միշտ բարդաւաճելոյ զուսմունս ի մէջ իւրեանց և ազգին, հաստատեալ են օրինաւոր վարժարան, և յայլ այսպիսի մտաւորական յառաջադիմութիւնս լինին զբաղեալ որքան և դրամական կարողութիւն նոցա ի ձեռն անշուշտ օգնականութեան մօտակայ և հեռաւոր ժողովրդոց խոստանայ։ Իսկ եթէ ազգն չունիցի համակրութիւն առ նոսա և չօգնիցէ, ուստի՞ կարեն առնել ինչ։

« Զուղայեցի ոմն » սաստիկ մեղադրէ Վառջնորդն վասն բացակայելոյ իւր ի Զուղայէ զինքն և զալոյ ի Հնդկիս ի նըւիրակութիւն Լճմիաճնայ։ Որքա՞ն սխալ է և յանիրաւի ամբաստանէ զնա յայտնի՞ զիտելով նորա որպէս և ամենեքին զիտակ են, զի Վառջնորդն կարգեալ ի Աթուղիկոսէն և նորա հրամանաւն եկեալ ի Զուղայ, ուրանօր եթէ որ ոք ազգեցութիւն և ակնածութիւն ունի առաջի Պարսից տէրութեան, որպէս ասացի ի վեր, ունի զայն շնորհիւ Աշխատառ Աթուղիկոսին, — ուստի յամենայնի լինելով ի ներքոյ կամաց և հրամանի նորա իբրեւ մեծաւորի և զլսաւորի իւր, որպէս և Վառքողի իւր, եթէ իբրեւ լոկ եկեղեցական և եթէ իբր այժմու Վառջնորդ Զուղայու կամ Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց, զի՞արդ կարէր չհնազանդել հրամա-

նի Աթուղիկոսին, որ կարէ միշտ յետս կոչել զնա կամ տեղափոխել, — վասն որոյ եթէ որ ոք զանգատ ունիցին Զուղայեցիք՝ այդ մասին պարտ է նոցա զիմել առ Աթուղիկոսն, և ոչ զըպարտել զՎառջնորդն՝ որ է ընդ անմիջական հրամանաւ Նորա։ Եւ տակաւին մեզ յայտ է գլխովին՝ եթէ նպատակ այցելութեան Վառջնորդին ի Հնդկիս — որ ևս է մի ի կարեւոր վիճակաց իւրոց, զի այնքան Վառջնորդ է Պարսկաստանի Հայոց՝ որքան Հնդկաստանի —, էլ լոկ նուիրակութիւն ժողովել վասն Լճմիաճնայ։ Եւսմ՝ մասին պարտ է նախ քննութիւն առնել, ապա տալ կարծիս կամ հանել զնա մեղադիր յաղազս երկարելոյ զբացակայութիւն իւր ի Զուղայէ, որպէս հաւանեալ եմ՝ ընդ դէմ իւր իսկ յօժարութեան և ընտրութեան. մէք տեղեակ չեմք զսլատճառացն՝ որ արդել լինին նմա վասն փութագոյն վերադարձման ի Զուղայ։

Խորհուրդ ազգայնոց տեղւոյս ևս նմա — ամենայն յարգանօք և խոնարհութեամբ մատուցեալ ի մասին վերադարձման — անշուշտ թողեալ է կամաց և ընտրութեան նորա — որ և անշուշտ կախեալ է որչափ զհանգամանաց՝ նոյն և զհրամանէ և անօրէնութենէ Վառքողին իւր յԼճմիաճնայ, որում պարտ է նմա ծիշդ հնազանդութիւն ցուցանել։

Եւ և հաւատամ ես՝ զի թողեալ ըզհոգեւոր նպատակ այցելելոյ զհեռաւոր ժողովուրդս վիճակաց իւրոց, — առ որ ունի ամենայն իրաւունք, — ունիցի և զայլ ազգօգուտ խնդիրս և նպատակս յաւէտ վերաբերութեամբ զպրոցաց Զուղայու. և եթէ այնպէս՝ պարտ է մեզ ամենեցուն

ցանկալ նմա և ըստ կարի օժանդակ լինել յաջողման առաջեկալ նպատակացն։»

ԱՂԱՆՈՒՐ ՊԵՏՐՈՍ ԱՂԱՆՈՒՐԵԱՆՅ.

1876 Յ—ւէ— 40 ( Ն. Տ. )

Ի Ռաւիս:

Այս պատճէնէ ( զոր շատոնց ստացած եմք եւ անուշադիր պիտի թողնէինք եթէ այս օրերս եւս լրագրաց մէջ երկար եւ ստայօղ հրատարակութիւնք չտեսնէինք ) ինչպէս նաեւ Ս—ր—հանդէս Ի—լանդէս քաժնի մէջ օրինակուած մի նամակէ՝ ուշադիր ընթերցողն կրնկատէ Զ—այ՝ յէ «Տի նման անձանց պատճառաբանութիւնքը եւ դաւաճանութեանց շարժառիթները՝ որով չարաչար կըսրսնեղին՝ որ Թեմակալ — Առաջնորդն ինչո՞ւ համար Հնդկաստան այցելութեան կերթայ եւ Զուղայէն կըացակայի, եւ միեւնոյն անձն եւ նմանքն են՝ որ ուրիշ անգամ եւս հրատարակած են՝ թէ ինչո՞ւ համար Հնդկաստանը Առաջնորդաց այցելութիւններէն եւլն զուրկ մնացած է։

Աւելի հետաքրքիր լինել եւ զննել չեմք ուզեր այսպիսի անձանց եւ դաւաճանութեանց նկատմամբ՝ թէպէտ քաջ գիտեմք շարժառիթները եւ քաղաքի Ռաւիս—ի—ն—ք, եւ միշտ անուն եւ պատիւներուն խնայելով՝ ընդ քօղով անցած եմք եւ պիտի անցնիմք՝ ինչպէս որ Կալիկաթաբնակ Զեր—նի էլ—լեցակ—նի նրկատմամբ եւս առ այժմ այսպէս վարուելով, կ'իշեցնեմք Թագէոս, Մովսէս եւլն. Եպիսկոպոսաց գէմ գործածները եւ փոխադարձաբար կրածները, եւ եթէ չուզեր ի ծերութեան հասակին

դառնութեամբ . . . ի գերեզման իջանել, թող այլ եւս զգաստանայ եւ զգուշանայ՝ եւ երբէք իւր գիղած հարստութեան գումարներուն վերայ չսպաւինի։

Ի ՏՓԽԻՍԱՅ.

( Աշէ—լ Ի—ն Զ—յ—ք ).

3.) Այլ և յայտնած է յօդուածում, թէ կայր մի տուն գաւթ ումը արժողութեամբ 5000 ուրբ. որ կըբերէր 300 ուրբի արդիւնք, Կարկաւոր է դարձնել ուշադրութիւնը ընթերցողաց, զի այս տունը շինած էր կաւից և այնպէս յենուած էր մի հին ձեղքուած երկյարկ տան՝ որ երբ այս հին տունը քանդուէր, նոյն 5000 ուրբլանց անուանեալ տունն ինքն ըստ ինքեան պիտի անկանէր, որովհետեւ նորա պատը հին տան պատի վերայ էր ամրացած. Գրէ թէ 300 ուրդիւնք էր բերում, այդ եւս սուտէ. Այս տանը բնակվումէր Մուշեղ քահանայն և վճարում էր ամսական 10 ուրբեմն 120 ու տարեկան Իսկ պահարան անուանեալ տունը ձեղքուած էր և մերձ էր անկման, որպէս յատնի է այս տկոյց, կաղմեալ նահանգական ճարտարապետ Արեսպամովից և Պօլիցէիսիի Աֆիցերից ի 28 Սեպտեմ. 1874 ամի, որ և գտանի առ իս. Իսկ ինչ վերաբերի Պ. Ա. եանի տանը, որ նա իբր առաջարկումէր վաճառել եկեղեցոյն 8000 ուրբլով, սուտ է բոլորովին, որովհետեւ այդ գնով նա երբէք համաձայնած չէ տալու իւր կալուածքը. Ինչպէս լսել եմ՝ մինչև անգամ այս ամսու ևս առաջարկուել է նրան նոյն տան համար 8000 ուրբլի, բայց նա բաց է ի բաց մերժել է այս առաջարկութիւնը. բացի սրանից նորա գնելը անձեռնատու համարուեցաւ, որովհետեւ նորա շինութիւնը բոլորովին անպիտան էր ուսումնարանի համար՝ որպէս հնութեան պատճառաւ, նմանապէս որ կաւէ (ցիւէ) շինութիւն էր և խարխուլ